դատուեցաւ ան. վասնզի Կարկուր տրուած որոշումին չփոթ վիճակէն օգտուելով՝ գործադիր պաշտօնէութեան կը դիմէ և ամէն կողմ լուր կը տարածէ թէ նպաստաւոր վճիռ ստացած էր, և այլն։ Յարութիւն պտրք. նոր բողոքագիրով մը և փաստաբաններու խորհրդով խնդիրին նոր ձև մը կուտար, և այս անգամ Դատական նախարարութեան կը դիմէր. ձեռնհասութեան խնդիր ալ կը յուզէր՝ թէ պատրիարքի մը դէմ վճիռը գենպետէն միայն կրնար տրուիլ, և ոչ ուրիշ դատաւորէ։ Նախարարութիւնը գործը Պետական խորհուրդին որոշման կ'ենթարկէ, և անմիջապէս լուր կը տարածուի թէ Կարկուրի ձեռք բերած վճիռը նենգեալ և խարդախեալ և օրինաց հակառակ ըլլալուն ջնջուած է. և Մայիս 17ին լուր կ'առնուի թէ անգործադրելի վճռուած է Կարկուրի ձեռք բերած վճիռը. 21ին Պետական խորհուրդի որոշումը նախարարութենէ կը վաւերացուի և կը հռչակուի Ս. Յակոբի վանքին իրաւունքը և պաշտօնապէս պատրիարքարանին կը հաղորդուի և Եպարքոսական հաստատութեամբ հրատարակութեան կը տրուի, և Միաբանութիւնն ալ 1886 Օգստ. 11ին խնդութեամբ կը լսէ այդ յաջողութիւնները։

Յարութիւն պտրք. ապագայի նկատմամբ ինչ ինչ տեսակէտներով յարմար կը դատէ նոյն վճիռը նուիրագործել տալ կայսերական հաստատութեամբ, և արտին կէսը վաճառելով միւս կէսը չահագործելու արտօնութիւն կը խնդրէ։ Կառավարութիւնը նկատի կ'առնէ առաջարկը և Երուսաղէմի կառավարիչէն պաշտօնական տեղեկութիւններ կը պահանջէ. Կարկուր թէև կը բողոքէ այդ առաջարկին դէմ. սակայն պատրիարքին ջանքը կը յաղթանակէ. եւ կայսերական արտօնագիրին հասած ըլլալը 1888 Ապր. 2ին Միաբանութեան կը հաղորդուի։ Պատրիարքը յատուկ հրովարտակ ալ ստանալու ջանքը կը շարունակէ, որուն համաձայն կը սեպուի կայսերական հրամանին հրովարտակաց դիւանին մէջ արձանագրուած ըլլալուն վաւերական վկայագիրը, որ եւ Երուսաղէմի կառավարչութեան ալ կը հաղորդուի։ Արտին կէսը վաճառելով միւս կէսը չինելու արտօնութիւնը պատրիարքին ալ կը հաղորդուի Ապրիլ 3ին իբր դատական աւետիս։ Գործադրութիւնը փութացնելու համար անմիջապէս կտոր մը վաճառելու և չէնք